ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/3225-2026

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-1182-03.11.2025,15.01.2026-ԳԿ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

1. Նախագծի 1-ին հոդված՝

1) 1-ին հոդվածով նախատեսվող «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող «լ» կետը համարակալել որպես «իբ» կետ՝ որպես հերթական համարակալում,

2) «որը ստեղծված է» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝» բառերով, քանի որ անհրաժեշտ է հստակեցնել, թե որ մարմնի կողմից է ստեղծվում նշված համակարգը:

2. Առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածը լրացնել նոր «ժ.10» կետով, որի արդյունքում հոդվածը խմբագրվել է հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասը «ժ.9» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.10», «ժ.11» և «ժ.12» կետերով.

«ժ.10) վարում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգը.

ժ.11) սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման

կարգը.

ժ.12) մշակում, ներդնում և վարում է սպորտի ոլորտի պետական վարչական ռեգիստրները.»:»

3. 3-րդ հոդվածը նախագծից առաջարկում ենք հանել, քանի որ տվյալ հոդվածի բովանդակությունը ներառվել է օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում:

4. Նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածները առաջարկում ենք միավորել, համարակալելով որպես 3-րդ հոդված՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:»:

Հարգանքով՝ **/ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**